600.0061.07.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2017 թվականի №61Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N375Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 4-ի N375Ա որոշման 2-րդ կետով հաստատված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն) պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը ապահովել Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթը, ընդ որում, այն պետք է ներառի Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը,

բ) ի պատասխան Հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 11-ի ՈԱԲ-011Հ գրության՝ Ընկերությունն իր 2017 թվականի փետրվարի 6-ի N633 գրությամբ հայտնել է Թույլտվությամբ սահմանված վերը նշված պարտավորության չկատարման հանգամանքի մասին և խնդրել է Թույլտվությամբ սահմանված պարտավորության կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով գործադրել բոլոր ջանքերը՝ Թույլտվությամբ սահմանված Հայաստանի Հանրապետության 80 տոկոսի փոխարեն 85 տոկոս բնակավայրերում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթի ապահովման համար,

գ) Հանձնաժողովի կողմից 2017 թվականի փետրվարի 10-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել Հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 10-ի ՆԱԲ-259Հ գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2017 թվականի փետրվարի 21-ի N17-877 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթով ապահովման ենթակա Հայաստանի Հանրապետության 85 տոկոս բնակավայրերի ցանկը և 5 տոկոս լրացուցիչ բնակավայրեր ծածկույթով ապահովելու նպատակով նախատեսվող ներդրումների չափը,

ե) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, որի դեպքում Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում երկարաձգել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետը մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը և պարտավորեցնել Ընկերությանը Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 80 տոկոսի փոխարեն լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթով ապահովել Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 85 տոկոսը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետում «հունվարի» բառը փոխարինել «հուլիսի» բառով, իսկ «80» թիվը՝ «85» թվով:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
7 մարտի 2017թ.
ժամը 16[00]